

Աթեոսներորդ դարուն ատենները սկսաւ իյնալ գրագիտութեան պայծառութիւնը . անոր տեղը սկսաւ փիլիսոփայական ամբարտաւանութիւնը , որ նոյն դարուն վերջերը բոլորովին յայտնուեցաւ : Ըմէն գրուածքներու մէջ մտաւ աս ամբարտաւան փիլիսոփայութիւնը , ու ամենուն մտքին տիրեց : Ընցած դարուն գեղեցիկ օրինակները թողուցին , ու բոլորովին իրենք զիրենք տուին արուեստակութեան , ու ճարտասանութիւնը իմաստակութեան դարձուցին : Ըսանկով կիրթ ախորժակը գնաց , տեղը եկաւ փուճ զուարճախօսութիւն . ընտիր ոճը կորսուեցաւ , տեղը մտաւ իմաստակ ու կտրտած զուրյուածք մը : Ըյսպիսի ապականութեան մեծ պատճառ եղաւ Ֆրանսէի ճամբան ու գրուածքները . շատ ջանաց Ռոլէն որ աս բանիս դէմը առնէ , բայց ճար չեղաւ : Ընց դարուն հետ մէկտեղ սկսաւ տեսակ մը բարոյական և ուսումնական խռովութիւն մը , որ Առդովիկոս Ժեմբոլոր ատենը քշէլէն ետեւ , նոյն դարուն վերջերը Առդովիկոս Ժեմբոլոր ատենը քաղաքական մեծ խռովութիւն դարձաւ :

Ընց դարուն մէջ Վաղղիացիք մեծամեծ մատենագիրներ ալ ունեցան , բնական գիտութիւններն ալ շատ առաջ գնացին , այնպէս որ ըստաբեալ դար ըսուեցաւ . միայն թէ աս լոյսը շատ անգամ ծուռ բնազանցութեան խաւարովը մթնեցաւ , և իմաստակներու բազմութենէն փիլիսոփայութիւնը ընկղմեցաւ . ուստի նախապաշարմունքներու կարգը դրուեցան ինչուան աստուածապաշտութեան ու բարոյականին անտարակուսելի ճշմարտութիւնները :

Իսկ աս դարուն մէջ Վափոլէոնի իյնալէն ետեւ կրնայ ըսուիլ թէ Վաղղիացւոց լեզուն ու մատենագրութիւնը բոլոր աշխարհք տարածուեցաւ : Շատ երեւելի մատենագիրներ կան հիմա Վաղղիա՝ որոնց անունը ոչ միայն Վաղղիացիք , այլ նաև Եւրո-

պայի ուրիշ ամէն ազգերը պատկառանօք կը յիշեն , ու իրենց գրուածքները կը թարգմանեն : Իսկ Վաղղիացւոց հիմակուան մատենագրութեանը ամենէն մեծ պարծանքը աս է , որ ուրիշ ամէն ատեններէն աւելի շատ են հիմա բարոյականի ու դաստիարակութեան վերաբերեալ ընտիր գրուածքները :

ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆ

ՀՈՎԻԹ ՀՐԵԱՅ

Ի . Երախտեայ ծառայունի :

Ի պարտարօտ վիճակս հովուապետին Ըրբունայ , ամբառնայր դառնադ դալարագեղ յերկնաբերձից 'ի թիկանց կուսէ պսակեալ և 'ի սաղարթախիտ մայրեաց , որովք հեշտընկալ իմն բազմարան ընծայէր արևակէզ հովուին և տաժանաբեկ ուղեորի : Ընդր յաճախ 'ի բարձրանալ ահանն արևու յետ արբուցանելոյ զխաչինս իւրեանց ելանէին տուարածականքն՝ տուեալ զանձինս 'ի զուարճախառն զրոյցս , 'ի դիւր հանգստի և 'ի զնին վայրացն . զի այնպէս ակնապարար են տեսարանք բնութեան ամենայն ուրեք : Ըստորոտով իսկ բլրակին ընթանայր մեղմ կարկաջանօք վտակ ականակիտ՝ զարտուղեալ 'ի մեծէ և 'ի բացական գետոյ , և որպէս հետաքնին անցաւոր զվայրօքն դեգերեալ , և ոչինչ 'ի բացեայ անդէն նուազեալ , իբրև յակամայս անկեալ յուժոյ , 'ի գոյն արծաթի ծաւալանայր թաքթաքուր 'ի մարմանդս անդ : Ըյլ ճարտարին նախահոգ ինամք առ ոտիւք բլրակին յարդարեալ էր լճակ ձեռագործ , աւազան առ ձեռնպատրաստ յարբումն խաշանց և 'ի լոգարան մանկանցն հովուաց . ընդ լիճն ընդ այն անցեալ յաւելուածոյ ջուրցն՝ յառաջ և ս վարէին զգեղեւեալ ըն-

Թացն արբուցանել և զանդաստան մի փոքրիկ որ մերձ 'ի հանգրուանսն էր :

Ար անդանօր ակումբ բոլորեալ հո վուաց որպէս յերեկն և յեռանդն , և ընդ երկար 'ի հաճոյական իմաստս ըմբռնեալ վասն այնպիսւոյ տեսլեան , աչօքն և սրտիւք քան թէ խօսիւք շրթանց բարբառելով . ապա ելոյժ մի ոմն 'ի նոցանէ զուռութիւնն , և զսրտին իւրոյ պարզէր զիմացուածս . մինչ և ամ հովուացն յորս ոչ ինչ պակաս 'ի խօսողէն նոյն կիրք ազդեալ լինէին , գուչել միաբերան . “ Ա՛վ գեղեցիկ դարեանդ , օթարաննախանձելի , ո՛վ քաղցր դիւր վաստակոց ” . . . Այլ իբրև լուեցին յայսպիսեաց և յառաւել ևս զարմանաց , եբաց զբերան իւր ծերունին Ա՛րբուն որ բազմէր 'ի միջի նոցա , և ասէ .

“ Բնութի , որդեակք իմ , դայեակ
,, առաջին է և ամենայնի յանձանձիչ .
,, այլ ոչ ունի զանթերին դիւրութի
,, հայթհայթել մարդկան , և ոչ այդ
,, ամենայն զոր տեսանէքդ և ընդ որ
,, բերկրեալ սքանչանայք 'նորին միայ-
,, նոյ գործք իցեն , այլ գործակից ե-
,, կաց նմին և ձեռն մարդոյ . զի որ-
,, պէս ոչ ինչ օգտէ մարդոյ առաւելու-
,, թիւն մտաց՝ եթէ ոչ ձեռն 'ի գործ
,, և ջան 'ի կիր արկանիցէ , այսպէս
,, և 'ի թողուլ անդ զբնութիւն ան-
,, փոփոխ յիւրումն էութե : Ա՛պաքէն
,, որթ է որ բերէ յոտինն Ա՛սեաց
,, զգուարթարար գինին . այլ եթէ ոչ
,, էր մշակին յատեալ 'ի ժամու զուռս
,, նորա , այժմ թերակատար արդեօք
,, մնայր խնջոյիցս բերկրութիւն : Այլ
,, տեղիս այս յորում կամքս՝ ոչ բա-
,, զում ինչ ազգօք յառաջ դաշտ լոկ
,, թափուր էր՝ զբարձրաւանդակդ 'ի
,, միջի ունելով , այլ ոչ հարթածա-
,, ւալ զգլուխն , որպէս այժմս , բայց
,, կոշտք հողոյ և թուփք և խարք . և
,, ոչ առուական մօտէր 'ի սա յայնժամ
,, և ոչ հանգրուանք մեր հանդիպոյ
,, ամբառնային : Այլ մի ոմն 'ի հա-
,, ւուց իմոց անդ ուրեմն յաւուրս

,, Ա՛հագնի իբրև դարձեալ գայրնա
,, 'ի պատերազմէ վիշապազանցն , որ-
,, դուց Ա՛գագահայ , եկեալ աստա-
,, նօր և ակն արկեալ զվայրօքս , ըն-
,, տրէր իւր տեղի բնակութեան անդ
,, ուր իմս արդ ամբառնայ բնակա-
,, րան . և վառեալ գեղեցիկ օրինակա-
,, գեղապսակն Տիգրանայ , որոյ ակա-
,, նատես լեալ էր համօրէն աշխարհա-
,, շինութեանցն , ձեռն 'ի գործ ար-
,, կեալ յարդ և 'ի զարդ բերէր զտե-
,, ղիս . նա զառապար դարեանդս հար-
,, թեաց , նա տնկեաց զծառս՝ յորոց
,, բազումք տեղի ետուն ժամանակին ,
,, և այլք ընդ նոցա վերաբուսան , զի
,, այսպէս և բնութիւն հնանայ : Այ-
,, ինքն գործեաց զաւազանս զայս յար-
,, բուցումն խաշանցն . քանզի որպէս
,, տեսանէքդ , վտակն բացական էր
,, աստի , և այլում գերդաստանի մեր
,, ձաւոր . իսկ նորա առու հատեալ
,, ընդերկարաձիգ արար զգնացս նո-
,, րա : Այ ժամանեաց նա վայելել կե-
,, նօքն յարգասիս ամենայնի զոր ա-
,, րար , և զոր տակաւին երկնէր 'ի
,, մտի առնել . այլ մեռաւ գոհու-
,, թեամբ . քանզի գեղեցիկ խորհր
,, նա այսպէս , թէ անձին գործէ զոր
,, ինչ ոք այլոց բարի առնիցէ և յետ
,, իւր թողուցու : Այրախտապարտ որ-
,, դիք նորա տնկեցին առ յիշատակէ
,, նորին զկաղնիս զայս զմեծ , յոր յե-
,, ցեալս եմ յետինս յորդուց նորա . ա-
,, ռաւել քան զերկերիւր ձմերունս
,, վանեաց բուն սորա առ յաւերժ
,, կացուցանել զյիշատակ բարերարի
,, մարդկութեանս : Հարք իմ պայա-
,, զատեալ մի ըստ միոջէ և ժառան-
,, գեալ զցուպ նորա , ոչ վերջացան
,, յաւելուլ ինչ ինչ նոր յարարս նախ-
,, նեացն , և 'ի դիւրութիւն հովուաց՝
,, որոց տեսուչ կարգեալ էին : Արոց
,, և ես պարտ անձին ծանեայ նմա-
,, նող լինել առաքիներեացն , այլ ոչ հա-
,, սի ես 'ի չափ հարցն իմոց : Իայց
,, դուք , որդեակք իմ , ժրացարուք
,, այսուհետև՝ մի զանձանց և եթ խոր-
,, հել զհանգիստ , այլ և զորոց յետ

„ ձեր գալոց են . որպէս զի և յետ
 „ ձերոյ վախճանին գտանիցին ա-
 „ նուան ձերոյ օրհներգութիւնք : Վա և
 „ թէ ոչ նոր ինչ յաւելիք յառաջ-
 „ նոցն վաստակս , գոնեայ աղարտողք
 „ նոցին մի լինիլիք , այլ մանաւանդ
 „ պահպանողք և գովիչք ևս երախ-
 „ տեացն . զի զբարեաց անջինջ օրէն
 „ է՝ զոր և ընդունիցի որ՝ պահել ՚ի
 „ սրտի զյիշատակս : Վհա և այդմ
 „ տարացոյց ձեզ կաղնիքդ հնգեքին
 „ որ շուրջ պատեն զմեծաւս այսու ,
 „ և ՚ի վերայ միոյ միոյ ՚ի նոցանէ տե-
 „ սանէք ՚ի վերոյ քան զարմն տաշեալ
 „ և զանուանս բարեացապարտ նա-
 „ խահարցն իմոց դրոշմեալ յորդուց
 „ անտի շնորհակալուաց , , :

Սեւաց Ղրբուն , և լուծեամբ
 մեկնեցան ամենեքին՝ որոճալով ՚ի մտի
 զբանսնորա . և ՚ի միւսանգամ խմբել
 նոցա անգանօր՝ զաչս ՚ի վեր առեալ
 ծերոյն ետես , և ոչ առանց գեղեցիկ
 շառագնուծեան , ՚ի կաղնուջ միում
 որ ՚ի սնարս իւր դրոշմեալ զիւր անուն ,
 և պսակս ծաղկանց զոստոցն զնովաւ
 կախեալ . զի ինքն իսկ Ղրբուն լեալ
 էր հեղինակ անդաստանին որ առ
 հովուավանօքն ՚ի զթօսանս պիտոյից
 բնակելոցն : Այլ ընդ աչալըջուծիւն
 հովուացն ինդամտեալ օրհներգ զնու
 սա և ասէ . “ Արախտագիտութիւն ,
 „ որդեակք իմ , զամենայն ինչ մեծ և
 „ կենդանի առնէ . և բազում այն է
 „ զի ազնուականութիւն շնորհակա-
 „ լու սրտից՝ պայծառագոյն ընծայե-
 „ ցուցանէ զերախտաւորին յիշատակ ,
 „ և ոչ ինչ ընդհատ ՚ի նմանէ փառս
 „ յանմահէն ընկալցի և գովութիւն
 „ ՚ի մարդկանէ , , :

—————
 Բ Ա Ր Ո Յ Ա Վ Ա Ն
 —————
 Հակիրորհիւն :

ԻՆԱՎԱՆ հակակրութիւններ կան
 որ շատ զարմանալի են , ու պատճառ-
 ները չեն գիտցուիր : Սարգիկ եղած

են որ վարդի հոտէն կը մարին եղեր ,
 թէպէտ և ուրիշ ծաղկներու հոտը
 կ'ախորժէին : Վաղաքապետին մէկը
 ձկան հաւկիթ տեսնելուն պէս՝ ձեռ-
 քը ոտքը դող կ'ելէր կ'ըսեն : Վոյն-
 պէս կին մը կայ եղեր որ եփած խե-
 չափար մը տեսնել չկրնար եղեր :

Արազմոս անունով հուշակաւոր
 կարգացողը , որ Սոթթերտամ քա-
 ղաքը ծնած էր , այնպէս կը զգուէր
 ձուկէ՝ որ ձկան հոտէն ալ վրան ջեր-
 մի պէս դող կ'իյնար : Վոյն բանը կը
 պատմեն նաև ուրիշի մը վրայ , որ ա-
 մենեկին օձաձուկ չկրնար եղեր տեսնել :

Յովսէփ Աբալիճէր ոչ երբէք կաթ
 կերեր է : Վարտան հեղինակը հաւ-
 կիթ չկրնար եղեր ուտել . Ստանիսլաւ
 Այակելուն էհիթագաւորը՝ խնձորէն
 կը գանի եղեր : Տիւշէն անունով իշ-
 խանի մըն ալ խնձոր հոտուրտացընե-
 լուդ պէս՝ քթէն սաստիկ արիւն կու-
 գայ եղեր : Հենրիկոս Գ Վաղղիոյ
 թագաւորը կատու եղած բնակարա-
 նի մէջ չէր կրնար կենալ կ'ըսեն : Ինս-
 փրուք քաղաքը երևելի իշխանաւոր
 մը կայ եղեր ատենով , որ կատուի
 ձայնը հեռուէն ալ լսելով՝ մէկէն
 արիւն կուգար քթէն կ'ըսեն : — Սար-
 դուն մէկը այնչափ կը գանի եղեր ող-
 նիէն որ մէկ անգամ ողնի մը տե-
 սած ըլլալով՝ երկու տարիի չափ իրեն
 այնպէս կ'երևնայ եղեր թէ փորուն
 մէջ ողնի կայ ու աղիքները կը կրծէ : Վ-
 սոր նման կտրիճ մարդ մը կայ եղեր որ
 մուկէն սաստիկ կը վախնայ եղեր : —
 Արիւստիպոս փիլիսոփան բարետու-
 քէ այնչափ կը գանի եղեր որ մէկը ի-
 րեն բարև տալուն պէս՝ կ'իյնայ կը
 մարի եղեր : Վեյլի ծիծաղականն աս
 է որ կ'ըսեն թէ Տոն Խուան Սուա-
 նունով սպանիացի իշխանը lana այս-
 ինքն Բորդ բառը լսելուն պէս կը մա-
 րի եղեր , թէպէտ և իր հագածն ալ
 բրդեղէն էր :

